ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2018-3-2-Ա

ք. Երևան 10.05.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի մայիսի 10-ի նիստում քննարկեց 2018 թվականի մարտի 20-ին «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ Ռ. Սիմոնյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված գյուտի (հայտ AM20170084) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել էր հետևյալ հիմքերով.

Գործակալությունը որոշում է մերժել արտոնագիր տալը ամբողջությամբ, քանի որ ներկայացված հավակնության սահմանմամբ՝ հայտարկված գյուտը՝ առաջին հայացքից (ակնհայտորեն, բացահայտորեն), չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության «գյուտարարական մակարդակ» պայմանին. Ըստ հայտատուի, գյուտի խնդիրն է՝ «գազի արտահոսքի ժամանակ ահազանգման համակարգի հնարավոր բոլոր տարբերակների կիրառությունն է ի հաշիվ ձայնային, լուսային և տեքստային ահազանգման եղանակների»: Ըստ էության գոյություն ունեցող գազի արտահոսքի վերաբերյալ ձայնային ահազանգման եղանակը լրացվում է լուսային ու տեքստային ահազանգման եղանակներով: Հայտարկված գյուտի էական հատկանիշներն են՝ 1. համակարգն ունի գազային տվիչներ 2. միկրոպրոցեսորային բլոկ 3. ավտոմոբիլի վահանակի վրա տեղակայված գազի արտահոսքի ձայնային ազդանշանիչ 4. գազային տվիչները, միկրոպրոցեսորային բլոկը և գազի արտահոսքի ձայնային ազդանշանիչը հաջորդաբար միացված են իրար 5. համակարգն ունի միկրոպրոցեսորային բլոկին միացված գազի արտահոսքի բացահայտման լուսային ազդանշանիչ 6. համակարգն ունի միկրոպրոցեսորային բլոկին միացված արտահոսած գազի խտության թվային տվիչ: Սակայն, 1-4 հատկանիշները հայտնի են՝ «Руководство по организации и выполнению услуг и работ по переводу на компримированный природный

газ автотранспортных средств, находящихся в эксплуатации. РД 03112194-1099-03. –М.: ФГУП НИИАТ: Компания “Автополис-плюс”, 2005. –176 с. стр. 99-101» տեղեկատվության աղբյուրից (հայտատուի կողմից ներկայացված գյուտի ամենամոտ եղանակ): 5-րդ հատկանիշը բացահայտված է, մասնավորապես՝ http://www.radioshema.ru/elektronika-v-bitu/852-2012-02-08-13-06-14.html (որտեղ լուսային ազդանշանիչի կիրառման մասին տեղեկությունից զատ նշված է նաև այդ սարքի կիրառման հնարավորությունը գազաբալոնային սարքավորումներով ավտոմոբիլներում), և https://dadget.ru/signalizator-utechki-gaza/ տեղեկատվության աղբյուրներում: Իսկ 6-րդ հատկանիշը, մասնավորապես՝ https://dadget.ru/signalizator-utechki-gaza/ և https://geektimes.ru/company/dadget/blog/274152/ տեղեկատվության աղբյուրներում: Բացի այդ անհրաժեշտ ենք գտնում տեղեկացնել, որ փորձաքննության ս.թ. հոկտեմբերի 25-ի «գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու հնարավորության մասին» ծանուցագրին ի պատասխան հայտատուի կողմից ս.թ. նոյեմբերի 27-ին ներկայացված նկատառումներում, մասնավորապես՝ դրանց 5-րդ կետում նշված է. «համակարգի լրացուցիչ տեքստային և լուսային ազդանշանիչները տեղակայված լինելով սարքերի վահանակի վրա, վերարտադրում են ոչ թե վարորդի խցիկում առկա գազի արտահոսքը, այլ նաև հնարավոր հավանական արտահոսքերն ավտոմոբիլի շարժիչի ծածկոցի տակ և բեռնախցիկում», սակայն այդ տեղեկատվությունն, ըստ էության, բացակայում է հայտի սկզբնական նյութերում՝ առավել ևս հավակնության սահմանման մեջ, ըստ որի և որոշվում է գյուտի արտոնագրաունակությունը: Ուստի այդ տեղեկատվությունը փորձաքննության կողմից չի կարող հաշվի առնվել գյուտի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելիս:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ այն չի համապատասխանում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության գյուտարարական մակարդակի պայմանին:

Բողոքարկողը շարունակեց պնդել բողոքը բավարարելու վերաբերյալ իր տեսակետը:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների

քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ Ռ. Սիմոնյանի կողմից ներկայացված գյուտի (հայտ AM20170084) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶԻԶՅԱՆ